

կեր Մաթիկը Վասպուրականի իր հալածանքներուն մէջ հաղորդուած՝ այս intuitionին: Գուցէ: Ուշագրաւ է, որ արեւելահայ այս միաստիքը մատչելի չըլլայ մեր գաւառներուն, բայց ըլլայ տիրական արտասահմանեան կողմերուն վրայ: Մաթիկին փոխարէն՝ ես զինքը զոհ մը կը նկատեմ այս մռայլ օրէնքներուն: Ուշագրաւ է, որ զոյգ սա մտայնութեանց սկզբնական անհաշտութիւնը, այսօր անհաշտութիւն է ետք, մնայ կանգուն տակաւին ու մեզ ընէ իրարու հանդէպ այնքան անկարեկիր: Արեւելահայ այս իմացական գերագահութիւնը, զոր կ'որոշադրեն, աւելի ուժով հարուածելու համար, մտայնութեան այլութիւն մըն է, մէկ ստորոգելի այդ միաստիքին, ջերմ, հերետիկոս, ու վարակիչ՝ նման ամէն աղանդի:

Աչք նետեցէք այդ ոգիին այժմեան արտափայլումին, Խորհրդային Հայաստանի մէջ ու պիտի համոզուիք այն մեզի համար անըմբռնելի կատաղութեան, որով կը հալածեն անոնք իրենց այլացած եղբայրները:

Այդ երկրին մէջ Դաշնակցական մը աւելի սեւ է, քան թուրքը:

Այդ երկրին մէջ տիրող միաստիքը խոր վանողութեամբ մը տրամադրուած է արեւմտահայ ո՛չ թէ զանգուլակին, այլ անոր գաղափարային լինելութեանց գրեթէ բոլորին ալ:

Մեր բանաստեղծութի՞ւնը: Շովինոս կամ մանրապուրժական բաջաղանք:

Մեր վէ՞պը: Նոյն հոգեբանութեան արշիւ:

Մեր մամո՞ւլը: Լագէյների բղաւո՛ւմ:

Աւելորդ է շարունակել:

Օտարէ մը դէպի օտար այսօր անհաշտ արեան հեղեղները միայն կ'ընեն հասկնալի:

Մաթիկին ժամանակ նո՞յնն էր ոգին: Արեւմտահայերս կռուողներ տուինք ու չզբաղեցանք մնացածով: Չենք ալ զգար մեր պակասը, երբ ոչ մէկ իմացական ընկճող դէմք ունեցանք անոնց փաղանգին դիմաց: Զարգացումը չէ, որ ունիմ նկատի, այլ՝ հաւատաւորութիւնը,